

Հ. Օ. Մարգարյան

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Տիգրան Կամսարականը 19-րդ դարի 80-ական թվականների հայ ունիստական գրականության տաղանդավոր ներկայացուցիչներից մեկն է։ Արևմտահայ ուխտենականների գրական շարժումը իր գաղափարական գեղարվեստական առանձնահատկություններով հանդիսանում է վերելքի գծով զարգացող հայ գրականության կարևորագույն օղակներից մեկը։

Արևմտահայ ուխտենականների պայծառ համաստեղության մեջ Տ. Կամսարականի անունը ամենալայն ժողովրդականություն վայելող անուններից մեկն է։ Գրական ասպարեզ մտնելով 17—18 տարեկան հասակում, իր առաջին՝ ոչ մեծ գեղարվեստական արժեք ունեցող մի շարք գործերից հետո Տ. Կամսարականը, ընդամենը 21 տարեկան հասակում, գրեց «Վարժապետին աղջիկը» ունիստական բարձրարժեք վեպը։

«Վարժապետին աղջիկը» հանդիսացավ այն ստեղծագործությունը, որը ամենից կատարյալ կերպով մարմնավորեց գաղափարական-գեղարվեստական այն սկզբունքները, որոնց պաշտպանությամբ հանդես էին եկել ուխտենականները։ Կամսարականի այդ ստեղծագործությունը բարձրացրեց գրական նոր սերնդի հեղինակությունը, ընդլայնեց ընթերցողների շրջանակները, ցույց տվեց ունիստական սկսած հնարավորությունները նաև վիպական ժանրում։

«Վարժապետին աղջիկը» վեպից հետո Կամսարականը շարունակեց ակտիվ կերպով մասնակցել գրական-հասարակական կյանքին. նա առանձնապես բեղմնավոր գործունեություն ծավալեց 1890—92 թվականների ընթացքում, երբ «Արևելք», «Հայրենիք» ու «Մասիս» պարբերականներում հանդես եկավ թատերական գրախոսություններով, բազմաթիվ քրոնիկներով ու հոդվածներով, մի շարք գրական ուսումնասիրություններով, և, վերջապես, այդ ժամանակաշրջանի իր երեք լավագույն ստեղծագործություններով՝ «Հարո», «Ընկուզին կողովը» և «Հավկուլ» պատմվածքներով։ Այդ ստեղծագործություններում իր արտահայտությունը գտավ Կամսարականի ղեմկրատիզմն ու ժողովրդասիրությունը։

1895—96 թվականների դեպքերի նախօրյակին հաստատվելով Եգիպտոսում, Կամսարականը շարունակեց աշխատակցել թե՛ պոլսահայ, թե՛ եգիպտահայ մամուլին, Եգիպտոսում ապրելու պատճառով Կամսարականին բախտ վիճակվեց խուսափել 1915 թ. երիտասարդ թուրքերի կազմակերպած սպանդից, որոնց քաղաքականության նկատմամբ հենց սկզբից իսկ նա սկեպտիկ վերաբերմունք էր մշակել։

Թեև 1908—1915 թվականների ընթացքում, երբ Կամսարականը հանդես եկավ «Փրկանք» ունիստական դրամայով, թեև 1920—1941 թվականների ընթացքում, երբ աշխատանքից քաշված ապրում էր Ֆրանսիայում, Կամսարականի գրական-հասարակական գործունեությունը ընդհանուր առմամբ համընթաց էր ժամանակի ոգուն։

Կամսարականի կյանքի և ստեղծագործության վերջին ժամանակաշրջանում առանձնապես հետաքրքիր է նրա քաղաքական դիրքորոշումը՝ ղեկի մեր նորածագ հայրենիքը՝ Սովետական Հայաստանը 60 տարեկան հասակում, 1924 թվականին, վերջնականապես ըմբռնելով արևմտեվրոպական դիվանագիտության խայտառակ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ, Կամսարականը արիություն ունեցավ ի լուր ամբողջ սփյուռքահայության հանդես դալ «Հյուսիսեն փրկություն» ստացած Սովետական Հայաստանի աշխատավորության ու ղեկավարության պաշտպանությամբ, ողջունեց երկրում ծավալված շինարարությունը 1926 թվականին Կամսարականը Շիրվանզադեի և Լ. Զոպանյանի հետ կազմակերպեց արևմտահայ ղեմակրատ գրողների ու արվեստագետների հայտնի «Բողոք»-ը, որի մեջ խստագույն կերպով դատապարտվում էր զաշնակցության հակաժողովրդական, հակասովետական քաղաքականությունը և ողջունվում էր Սովետական Հայաստանը՝ իրեն ամբողջ հայ աշխատավորության, հայ ժողովրդի հայրենիքը:

Տ. Կամսարականի գրական ժառանգության ուսումնասիրումը մինչև այժմ առանձին մենագրության նյութ չի դարձել: Լիզ ուղղությամբ կան ընդամենը մի քանի փոքրածավալ ուսումնասիրություններ ու հոդվածներ: Ուսումնասիրություններից առավել ուշագրավ են երկուսը, որոնցից առաջինը Տ. Կամսարականի մահվան առթիվ գրված արևմտահայ հայտնի բանասեր Բ. Լեզադյանի հոդվածաշարն¹ է, իսկ մյուսը պատկանում է սովետահայ բանասեր Գ. Ստեփանյանի գրչին և զետեղված է իրենանում հրատարակված «Վարժապետին աղջիկը» վեպում, իրեն առաջարան²:

Կամսարականի գրական ժառանգությունը մինչև այժմ անիրավացիորեն բավականին փոքր է համարվել, համարյա ոչինչ չի ասվել, մոռացության են մատնվել եզրկատահայ և ֆրանսահայ պարբերականներում լույս տեսած նրա ստեղծագործությունները:

Իրականում Կամսարականի գրական գործունեության շրջանակները շատ ավելի ընդարձակ են. բավական է նշել, որ սկսած անցյալ դարի 80-ական թվականների կեսերից մինչև 1940 թվականը, Տ. Կամսարականը, թեև ոչ մեծ հարատևությամբ, բայց և այնպես շարունակել է գրել, մասնակցել գրական-հասարակական կյանքին: Լիզ ժամանակարանից բացում նա աշխատակցել է «Լույս», «Գիտական շարժում», «Լեռնակ», «Լուսին», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Հոսանք», «Լեռն» «Պարոն», «Լուսաբեր», «Լուսաբեր-Լեռն», «Ինչիմ», «Լեզադյան», «Որբունի», «Նոր կյանք», «Լեռնիտ», «Կյանք և արվեստ», «de foyers», «Լեռնուն տարեկույցը», «Եզրկատահայ տարեկույց» «Լեռ տարեկույցը» և այլ պարբերականներ:

Բացի մամուլի էջերում ցրված նյութերից Տ. Կամսարականը ունի նաև մի շարք արժեքավոր, ղեկն անտիպ ձեռագիր աշխատություններ («Փրկանք»՝ ռեալիստական դրաման, գրված Սիք. Կյուրճյանի հեղինակությամբ՝ բազմաթիվ անգամ բեմադրված, 70 նամակ Հայկ. ՍՍՈ ԳԼ Գրականության և արվեստ-

¹ Բ. Լեզադյան, Տ. Կամսարական — «Նոր-լուր», Ստամբուլ, 1941, №№ 3779, 3480, 3783, 3784, 3788, 3790, 3796, 3799:

² Գ. Ստեփանյան, Տիրապետ Կամսարական — «Վարժապետին աղջիկը», Երևան, 1936, էջ 3-23:

տի թանգարանի Ա. Չոպանյանի ֆոնդում, 11 նամակ նույն թանգարանի Թ. Ազատյանի և 12 նամակ Վ. Մալեգյանի ֆոնդերում):

Ընդառաջելով մեր խնդրանքին՝ Փարիզի սուպարյան Մատենադարանը տնօրեն պ. Ա. Սալմասյանը բարի գտնվեց իր տնօրինության տակ գտնվող Մատենադարանի ֆոնդերից մեզ ուղարկել Տ. Կամսարականի մի շարք արժեքավոր ձեռագրերի ու մամուլում լույս տեսած մի քանի ստեղծագործությունների ընդօրինակումները¹:

Այս բոլորով հանդերձ Տ. Կամսարականի գրական գործունեության պատկերը ամբողջացնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նա իր ստեղծագործությունների մի զգալի մասը ստորագրել է տարբեր ծածկանուններով: Հենց այդ էլ հանդիսանում է մեր սույն հոդվածի նպատակը՝ ճշտել ու հաստատել Տ. Կամսարականի օգտագործած ծածկանունների քանակը, ցույց տալ, թե երբ և որ պարբերականներում են տպագրվել այդ ստեղծագործությունները:

* * *

Արևմտահայ իրականության մեջ ծածկանունների լայն տարածման պատճառներից մեկը սուլթանական սաստկացած գրաքննությունն էր, ինչպես նաև Պատրիարքարանի հետադիմական քաղաքականությունը, որի պայմաններում հալածանքի էր ենթարկվում ամեն մի անձնավորություն, որը հանդգնում էր հանգես գալ իշխող խավերի գաղափարախոսության դեմ:

Վերոհիշյալ պատճառների հետևանքով ծածկանունների օգտագործումը առանձնապես մասսայական բնույթ է ստանում սկսած 80-ական թվականներից և շարունակվում է հետագա մի քանի տասնամյակների ընթացքում:

Հանրահայտ է, որ ծածկանուններ են օգտագործել այդ դարաշրջանի համարյա բոլոր արևմտահայ գրողները՝ Հ. Պարոնյանը, Խ. Տեմիրճիպաշյանը, Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Հր. Ասատուրը և ուրիշներ: Խ. Տեմիրճիպաշյանը, օրինակ, օգտագործել է Խուսեւ Ատում, Նուրանիա, Մելանիա, Թևանիո, Մոնագն, Հուր Հայրան, Ճգնավոր, Ճին Հակոբ, Մշակ, Ա. Ազատախոհյան, Պ. Խալուրեի, Շարմենց, Իսկ Հ. Պարոնյանի ծածկանունները անհամեմատ շատ են:

Ծածկանունների օգտագործման այդ տրադիցիան շարունակեց նաև արևմտահայ գրողների հետագա սերունդը՝ Եր. Ոսյանը, Խ. Սրմաթեղխանյանը, Ռենիկ Չիֆթե-Սարաֆը, Ա. Չոպանյանը, Վ. Թեքեյանը, Վ. Մալեգյանը և ուրիշներ, ընդ որում ծածկանունների քանակը ոչ միայն չի նվազում, այլ, ընդհակառակը, ավելանում է: Բավական է նշել, որ միայն Վ. Թեքեյանի օգտագործած ծածկանունների քանակը մի տասնյակից ավելի է՝ Բ. Կ. Մ., Սուրեն Տը-

¹ Տ. Կամսարականի ձեռագիր գրական ժառանգությունից պ. Ա. Սալմասյանը անձամբ արտագրել և Երևան նվիր էր ուղարկել «Փրկանք» երեք գործողությունից բաղկացած դրաման: Այնուհետև հաջորդաբար ուղարկեց Տ. Կամսարականի «Սայրիկ», «Մայրիկ» և «Նորավանդի ընդօրինակումը» («Արեւելք» թերթի 1886 թ. մայիսի 3-ի համարից), «Հայրենասիրական պատգիրան» (2 էջ), «Գործ մը կոթող մը» (9 էջ), «Քառատուր պատգաններ» (41 էջ), ձեռագրերի, ինչպես նաև Հ. Մարյանին ուղղված մեկ, Լ. Բաշալյանին ուղղված չինգ նամակների ընդօրինակումները և մի շարք այլ նյութեր: Այս անշահախնդիր ու անհեղհան օգնության համար պ. Ա. Սալմասյանին հայտնում ենք մեր անկեղծ ու խորին շնորհակալությունը:

բանյան, Վահան Տիրանյան, Վ. Տ., Ասուպ, Համշիրակ Բ., Սկայուրդի, Իսկուհի Հովյան, Խոբեհ Ուոտում, Բիկմալիոն, Նշան Հարցական, Հովհաննես Կառապետ, Ասպատակ, Վերո, Պում և այլն:

Վարժապետին աղջիկը՝ վեպից անսխալապես հետո, այսինքն 1888 թվականի վերջերից մինչև 1920 թվականը, բացի իր իսկական անուն ազգանունով ստորագրված ստեղծագործություններից Տ. Կամսարականը պոլսահայ և եզիպտահայ մամուլում հանգես է եկել փոքր ծավալի բազմաթիվ քրոնիկներով, թատերական գրախոսություններով, մի քանի պատմվածքներով ու գրական-հրատարակախոսական գործերով, որոնք նա ստորագրել է տարբեր ծածկանուններով:

1909 թ. հունիսի 4-ին գրած՝ դժբախտաբար չափազանց համառոտ, րեզյումենը մի էջից բաղկացած իր ինքնակենսագրության մեջ Տ. Կամսարականը գրում է. «Արտասահմանեն աշխատած եմ «Արևելք»-ի Ասատուրի օրով, Անցյուրդ ծածկանունով հանապազօրյա 70 նոթ տված եմ կարծեմ: «Հայրենիք»-ի Շոգեգրիչը ևս եղած եմ և տնդորեն աշխատակցած նույն թերթին սկզբնական շրջանին... Արտասահմանի մեջ ստորագրած եմ Անցյուրդ, Հայկակ, Փյունիկ (Մարտ-ի մեջ) և Z.Z.Z: Արփիարին «Փարոս»-ին, Արփիարին «Մարտ»-ին, Ուայանին «Ազատ Բեմ»-ին աշխատակցած եմ համառոտեն: Վերջերս «Եյուզանդիոն»-ին տվի 3 հոդված Հայկակ կեղծանունով⁴:

Տ. Կամսարականի ծածկանունների մասին հարուստ տեղեկություններ կան Հր. Ասատուրի «Երմաստվերներ» գրքում: Հր. Ասատուրի հաջորդած տվյալ տեղեկությունները վերաբերում են Կամսարականի պոլսահայ մամուլում լույս տեսած գործերին և, առավել ևս, արժեքավոր են, որովհետև Հր. Ասատուրը ևս հայտնի ութսունականներից մեկն էր, երկար ժամանակ աշխատակցել և խմբագրել է «Արևելք» ու «Մասիս» թերթերը և այդ տարիների րեխացրում րեկերական սերտ հարաբերություններ է ունեցել Տ. Կամսարականի հետ: Խոսելով Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի «Արևելք» թերթում լույս տեսնելու հետ կապված մի շարք հանգամանքների մասին, Հր. Ասատուրը գրում է. «Վարժապետին աղջիկը»-են ետքը 1889-ին՝ Օվֆիտե ծածկանունով թատերական քրոնիկներ գրեց «Արևելք»-ի մեջ⁵. «1891-ի «Հայրենիք»-ին մեջ Ասեղ և Շոգեգրիչ ծածկանուններով հոդվածներ գրեց... և,—չարունակելով իր խոսքը, Հր. Ասատուրը նույն էջում ավելացնում է, թե,— Կամսարականը «Մասիս» թերթի մեջ «Հորիզոնին վրա» վերնագրով և Մոլուրակ ստորագրությամբ քանի մը քրոնիկներ ալ գրեց»:

Հր. Ասատուրը իր նույն աշխատության մեջ, Գր. Զոհրապին նվիրված հատվածում հայտնում է, որ Տիգրան Կամսարականը եզիպտոս հաստատվելով, «իբր նախկին եզրայրակիցները չէր ուզած առանձին ձգել և գրական եռանդի վերարժարծումով մը հետզհետե» իրեն է ուղարկել «արվեստով ու սրամտությամբ գրված հոդվածներ, որոնք հրատարակվեցան «Պզտիկ տոմսեր» վերնագրին տակ, նեւ ծածկանունով ստորագրվաւ»:

⁴ Շոգեգրիչ, «Ամենուն տարեցույց», 1910, էջ 120:

⁵ Տ. Կամսարականի Օվֆիտե ծածկանունով առաջին գրվածքը՝ «Գետուն» վերնագրով, լույս է տեսել աչ թե 1889, այլ 1888 թ. սեպտեմբերի 3-ին «Արևելք» թերթի № 1390-ում:

⁶ Հր. Ասատուր, Երմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 259:

⁷ Նույն տեղում, էջ 263:

⁸ Նույն տեղում, էջ 268:

«Դիմաստվերներ» գրքի առթիվ երկու մտերիմ ընկերների ընդհատված նամակադրությունը վերականգնվում է, Դրքի հրատարակումից առնաճակատ հետո ստանալով ու ընթերցելով այն, Տիգրան Կամսարականը, որն այն ժամանակ արդեն հաստատվել էր ֆրանսիայում, Փարիզից Հր. Ասատուրին ուղղում է սրտառուչ մի նամակ:

«Սիրելի Հրանտս,—գրում է Կամսարականը,—հուզմունքով կարդացի ինձի նվիրած տողերդ «Դիմաստվերներ»-ուդ մեջ: ...Քայլեց ժամանակը, վախճանի մոտ ծերունիներ են հիմա... Տխուր բան է եղեր ծերանայր, Հրանտ... մեր գրչի եղբայրները ծածկող հողը մինչև մեր ծունկերը բարձրացած է արդեն...»

...Ձեի գիտեր, սիրելիս, որ գրական ուսումնասիրությունի և կենսագրականի միջև ուրիշ սեռ մը գոյություն կրնա եղեր ունենալ, ինչպես այն, զոր այնքան շահեկանորեն ու հաջողապես իրականացուցեր ես «Դիմաստվերներ»-ուդ մեջ, դալար, 'ample' ու վառ ոճով մը»:

Տվյալ դեպքում, սակայն, կարևորն այն է, որ Կամսարականը անդրադառնալով իր ծածկանունների մասին Հր. Ասատուրի հաղորդած տեղեկություններին, նույն նամակում գրում է. «Քանի մը վրիպակ relever¹⁰ ընեմ իմ մասին գրածներուդ մեջ: Անցորդ ստորագրած եմ «Արևելք»-ի նոթերս (կարծեմ չ՞ո հատի չափ) և ոչ թե նևտ ու «Մասիս»-ի մեջ. «Մասիս»-ի մեջ նոթեր ունիմ նևտ ստորագրությամբ, բայց քանի մը հատ են ատոներ»¹¹:

Տ. Կամսարականի այս ճշտումը չափազանց կարևոր է. մի կողմից հաստատվում է ինքնակենսագրության մեջ «Անցորդ» ծածկանվան մասին ասվածը, իսկ մյուս կողմից հեշտացնում այդ երկու (Անցորդ ու նևտ) ծածկանուններում ստորագրված Կամսարականի ստեղծագործությունների որոնման գործը, որովհետև նամակում նշված են ոչ միայն թերթերի անունները, որտեղ լույս են տեսել այդ ստեղծագործությունները, այլ նաև այդ ստեղծագործությունների մոտավոր քանակը: Այդ ճշտումը միաժամանակ նշանակում է, որ Կամսարականը հաստատում էր Հր. Ասատուրի իր մյուս ծածկանունների մասին տված տեղեկությունները¹²:

Այսպիսով, դեռևս Տ. Կամսարականի կենդանության ժամանակ ճշտվում են նրա 9 ծածկանունները՝ Օվբիտե, Ասեղ, Շոգեգրիչ, Անցորդ, ZZZ, նևտ, Մոլորակ, Փյունիկ ու Հայկակ:

Վերոհիշյալը, իհարկե, չի բացառում այն, որ Կամսարականը նդիպտում եղած ժամանակ նշված 9 ծածկանուններից բացի օգտագործած լինի նաև այլ ծածկանուններ, որովհետև, ինչպես տեսանք, Հր. Ասատուրը խոսում էր Տ. Կամսարականի պոլսահայ մամուլում օգտագործած ծածկանունների մասին, իսկ ինքը՝ Կամսարականը իր ինքնակենսագրության մեջ, որը չրված է

⁹ Ample — ճոխ, հարուստ:

¹⁰ Relever — ցույց տալ, մատնանշել:

¹¹ Հայկ. ՍՍԻՒ ՔԱ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Աղաալյանի ֆոնդ, Տ. Կամսարականի 1921 թ. գեկտ. 23-ի նամակը Հր. Ասատուրին:

¹² Հետազոտում անդրադառնալով «Դիմաստվերներ»-ում թույլ տված իր ակամա սխալին և ընդունելով Տ. Կամսարականի գիտողությունը Անցորդ և նևտ ծածկանուններով լույս տեսած ստեղծագործությունների մասին, 1922 թ. հունիսի 14-ին Տ. Կամսարականին հասցեագրված նամակում Հր. Ասատուրը գրում է. «Ե՛րբ ունիմ «Աշակերտին հուշատետրեն» և «Մասնագիտ հուշատետրեն», «Դարավերջի տարիներեն» ուր առիթ ունեցա նորեն խոսելու Անցորդին վրա. զոր չեմ ուզեր չփոխել նևտ-ին հետ» («Անահիտ», 1931, № 5-6, էջ 117):

1909 թվականի հունիսի 4-ին, կարող էր խոսել մինչև այդ թվականը արտասահմանում օգտագործած իր ծածկանունների մասին: 1915 թ. սեպտեմբերի 4-ին Ա. Չոպանյանին ուղղված նամակում Տ. Կամսարականը, ի միջի այլոց, գրում է. «...Գիտես, սիրելիս, որ մենք «Արև» թերթը ունինք հոս, որուն ես այ աշխատակցեցա, քիչ մը Անցուրը և այլ ծածկանուններով»:

Ինչպես տեսնում ենք ինքնակենսագրությունից 6 տարի անց գրված այս նամակի մեր կողմից ընդգծված հատվածը ցույց է տալիս, որ Կամսարականը օգտագործել է նաև այլ ծածկանուններ: Եվ իրոք, հետագայում, Տ. Կամսարականի մահվան առթիվ նրա գրական ժառանգությունը նվիրված «Սիրուն»-ում լույս տեսած հոդվածի հեղինակը՝ թվարկելով Կամսարականի մեզ հայտնի 9 ծածկանունները, նրանց ավելացնում է նևստուր, Շ և Բ, Տեր-Ջաֆարյան ծածկանունները¹³: Այս երեք ծածկանունների մասին որևէ կասկած չի կարող լինել, որովհետև, ինչպես դա երևում է հոդվածից, հեղինակը նամակագրական կապերի մեջ է եղել Տ. Կամսարականի հետ և անձամբ նրանից ստացել է մի շարք արժեքավոր պարզաբանումներ նրա գրական ժառանգության մասին:

Այսպիսով, հաստատվում է, որ Տ. Կամսարականը իր գրական-հասարակական գործունեության ընթացքում օգտագործել է 12 ծածկանուն՝ Ովֆիտե, Ասեդ, Շոգեզիչ, Մոլուակ, Նետ, Անցուր, Քյունիկ, Հալիակ, Նևստուր, Շ, Բ, Տեր-Ջաֆարյան, ZZZ:

Սակայն վերոհիշյալով չի սպառվում Տ. Կամսարականի ծածկանունները պարզելու և հաստատելու խնդիրը: Ծածկանունների պատկանելության հաստատումը բավականին դժվար ու երբեմն բանասիրական լուրջ աշխատանք պահանջող գործ է: Գաղտնիք չէ, որ թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ իրականությունում մեջ նույն ծածկանունով հաճախ ստորագրել են մի շարք հեղինակներ: Անհրաժեշտ է ճշտել տվյալ հեղինակի ոչ միայն ծածկանունները, այլև պարզել, թե նա ո՞ր պարբերականներում է գրել, մոտավորապես ո՞ր ժամանակաշրջանում, որովհետև մինչև այժմ եղած հայ գրողների ու հասարակական գործիչների ծածկանունների մասին եղած սակավաթիվ ցուցակներում ու վկայություններում իրեն սկզբունք՝ հեղինակի անվան դիմաց դրված է նրա ծածկանունը կամ ծածկանունները, առանց նշելու այդ ծածկանունների պատկանելությունը հաստատող աղբյուրները, այդ ծածկանուններով ստորագրված ստեղծագործությունների տեղը: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, բացի ընդհանուր վկայություններից, ակամա սխալներից խուսափելու համար, անհրաժեշտ է ուշադրությամբ ուսումնասիրել տվյալ հեղինակի ստեղծագործության զաղափարական ու լեզվա-ոճական առանձնահատկությունները, թեմատիկ ընդգրկումների շրջանակները, իմանալ տվյալ ժամանակաշրջանի մյուս գրողների ծածկանունները:

Այս բոլորը ցույց է տալիս, որ ծածկանունների պատկանելությունը որոշելիս չպետք է անտեսել անգամ ամենաանշան թվացող փաստերը, որոնք կարող են օժանդակել այդ գործին: Այդ տեսակետից ինչպիսի՞ն է վիճակը Տ. Կամսարականի վերոհիշյալ 12 ծածկանունների հետ:

Ովֆիտե ծածկանվա՞ն մասին: Տ. Կամսարականը այս ծածկանունով թատերական գրախոսականներ է գրել «Արևելք» թերթում, 1888—1893 թվականնե-

¹³ ԳԱԽ, Ա. Չոպանյանի ֆոնդ, Տ. Կամսարականի նամակներ:

¹⁴ «Սիրուն», 1911, № 3—4, էջ 72:

րի ընթացքում: Տվյալ ժամանակաշրջանում այս ծածկանունը արևմտահայ ուրիշ ոչ մի հեղինակի կողմից չի օգտագործվել: Բացի Հր. Ասատուրի վերևում հիշատակված հեղինակավոր վկայությունից, որը չհերքվեց ոչ Կամսարականի և ոչ էլ մեկ ուրիշի կողմից, կոն մի շարք այլ օժանդակ տվյալներ, որոնք անառարկելիորեն ապացուցում են, որ այս ծածկանունը իրոք պատկանում է Տ. Կամսարականին:

Ասեղ և Շոգեգրիչ ծածկանունների մասին, Տ. Կամսարականը Ասեղ և Շոգեգրիչ ծածկանուններով ստորագրել է մի շարք հոդվածներ, թատերական գրախոսություններ ու գեղարվեստական ստեղծագործություններ Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթում, 1891 թվականին:

Ինչպես տեսանք, Տ. Կամսարականը իր ինքնակենսագրության մեջ բացահայտ կերպով հայտնում էր, թե «Հայրենիք» թերթի Շոգեգրիչը ինքն էր եղել: Ինչ վերաբերում է Ասեղ ծածկանվան՝ Տ. Կամսարականը չհերքեց Հր. Ասատուրի այն վկայությունը, որ ինքը Ասեղ և Շոգեգրիչ ծածկանուններով հոդվածներ է գրել 1891 թվականի «Հայրենիք» օրաթերթում: Այդ թերթի նույն և հետագա տարիների համարներում ուրիշ ոչ մի հեղինակ հսկողես չի եկել այդ ծածկանուններով¹⁵:

Բացի հեղինակավոր այս վկայություններից, կան նաև մի քանի օժանդակ տվյալներ, որոնք մի ավելորդ անգամ հաստատում են, որ Ասեղ և Շոգեգրիչ ծածկանունները իրոք Տ. Կամսարականին են:

Հր. Ասատուրը իր ձեռագիր ինքնակենսագրության մեջ, որը հարուստ քիբրիտորաֆիական տեղեկություններ է պարունակում նաև Ա. Արփիարյանի, է. Բաշալյանի ու Տ. Կամսարականի պոլսահայ մամուլում լույս տեսած ստեղծագործությունների մասին, 1891 թվականի «Հայրենիք» օրաթերթին նվիրված լրաժնում գրում է. «Օրագրիս քմահաճույքները—Ասեղ (Տ. Կամսարական)»¹⁶, եվ իրոք, Ասեղ ստորագրությամբ Տ. Կամսարականի այդ ստեղծագործությունը լույս է տեսել «Հայրենիք» օրաթերթի 1891 թ. № X 2 և 10-ում:

Հ. Արփիարը, որն այն ժամանակ նույնպես աշխատակցում էր Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթին, իր «Օրվան Դեմքեր-վայրկենական» շարքում խոսելով Տ. Կամսարականի մասին և բարձր գնահատելով նրա «Հարո» պատմվածքը, գրում է. «Ընդհանրապես ձեռքով կգրե և երբեմն շոգիով, վերջին եղանակով գրած ժամանակ շոգեկառքի մը պես ստեպ գծեն դուրս կելլե»¹⁷: Միանգամայն ակնհայտ է, որ Հ. Արփիարը ակնարկում է նույն թերթում Շոգեգրիչ ծածկանունով լույս տեսած Տ. Կամսարականի ստեղծագործությունները:

Մոլոուակ ծածկանվան մասին, Տ. Կամսարականի այս ծածկանվան առաջին հիշատակողներից մեկն եղել է ինովք Արմենը, որը իր կազմած «Հայ գրողների ծածկանունները» ցուցակում գրել է. «Մոլոուակ-Հր. Ասատուր, հետո Տ. Կամսարական»¹⁸:

Հայտնի է, որ Հր. Ասատուրը «Դիմաստվերներ» գրքում ոչինչ չի ասում իր կողմից այդ ծածկանվան օգտագործման մասին, ընդհակառակը, խոսելով

¹⁵ Ասեղ ծածկանունով ստորագրված հոդվածների կարելի է հանդիպել նաև այլ պարբերականներում (օրինակ, «Արևելյան մամուլ», 1897 թ.), բայց այդ հոդվածները Տ. Կամսարականի գրչին չեն պատկանում:

¹⁶ ԿԱԹ, Թ. Ապառյանի ֆոնդ, գործ 12—1, Հր. Ասատուրի կենսագրությունը, էջ 30:

¹⁷ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, № 140:

¹⁸ Թեոգրիկ, Ամենուն տարեցույցը, 1913, էջ 336:

Տ. Կամսարականի ծածկանունների մասին, նա անվերապահորեն հայտնում է, թե Կամսարականը այդ ծածկանունով մի քանի քրոնիկներ է գրել «Մասիս» հանդեսի «Մեր հորիզոնի վրա» խորագիրը կրող բաժնում և տալիս է այդ քրոնիկներից երկուսի բովանդակությունը: Քրոնիկներից մեկում Տ. Կամսարականը գրել է Իզմիրում ղերասան Թրյանցի հետ իր հանդիպման մասին, իսկ մյուսում՝ Ս. Ֆելեկյանի կողմից Պ. Դուրյանի բանաստեղծությունների մեջ «ուղղումներ» կատարելու մասին:

Առանց խորամուխ լինելու գործի էության մեջ, կարելի էր ենթադրել, թե Լեոնով Լևոնի Կրմենը սխալվել է Մուլորակ ծածկանունը նաև Հր. Ասատուրին վերագրելով: Այս ենթադրությունը առավել ևս կարող էր հիմնավոր թվալ, որովհետև Հր. Ասատուրը իր ինքնադիր կենսագրության մեջ խոսելով ու ցույց տալով Արախ, Հուր, Ան ծածկանուններով լույս տեսած իր ստեղծագործությունների տեղը, ոչինչ չի ասում իր կողմից Մուլորակ ծածկանվան օղտագործման մասին:

Այնուամենայնիվ նաև Կրմենի տված տեղեկությունը չէր կարելի անտեսել: Թվացող հակասության լուծմանը նպաստում է Թեոդիկի՝ Հր. Ասատուրի կենսագրության ու գրական գործունեությանը նվիրված փոքրիկ ակնարկը:

Թեոդիկը իր այդ ակնարկում հայտնում է, որ Ֆրանսիայից վերադառնալուց հետո Հր. Ասատուրը սկզբում աշխատակցել է «Արևելք» թերթին, ուր Արախ ծածկանվամբ երևացել են նրա «Կյանքն ի Ֆրանսյա» քրոնիկների շարքը: Շարունակելով իր խոսքը, Թեոդիկը գրում է. «1892-ի հունվարին (Հր. Ասատուր) Կամսարականի և Զոհրապի հետ հրատարակած է «Մասիս»-ն՝ ուր երևցան իր «Ջայ վանհեր», «Մեր հորիզոնի վրա»-ները Մուլորակ ծածկանվամբ (որ Կամսարականին ալ կպատկանեն)»²⁰:

Ճշմարտությունը այն է, որ 1892 թվականի հունվարի 4-ից նոր խմբագրական կազմով լույս տեսնող «Մասիս» հանդեսի № 3956-ում, Տ. Կամսարականը բացի իր իսկական ստորագրությամբ լույս ընծայած Եղիա Տեմիրճիպաշյանին նվիրված ուսումնասիրությունից, հանդեսի «Մեր հորիզոնի վրա» ընդհանուր խորագիրը կրող բաժնում զետեղել է Իզմիրում ղերասան Թրյանցի հետ հանդիպման մասին իր քրոնիկը, որը նա ստորագրել է Մուլորակ ծածկանվամբ: Այդ նույն խորագրի և նույն ծածկանվան ներքո Տ. Կամսարականը հետագայում ևս գրում է մի շարք քրոնիկներ («Մասիս», 1892, № № 3956, 3957, 3958, 3959, 3960, 3961):

Սակայն «Մասիս» հանդեսի № 3963-ում «Մեր հորիզոնի վրա» խորագիրը կրող բաժնում, որը նույնպես Մուլորակ ծածկանվամբ է ստորագրված, կարդում ենք. «Տիգրան Կամսարական, որ նվրոպա ուղևորություն մը կրնե գրեթե երկու ամիս ի վեր»²¹ և այժմ Փարիզ կգտնվի, տեսակցել է էմիլ Զոլայի և Ալֆոնս Ծոտեի հետ. ֆրանսիացի վիպասանները համակիր ընդունելություն րբեր են «Վարժապետին աղջկան» հեղինակին: Կամսարական իր ուղևորության տպավորությունները պիտի հրատարակե «Մասիս»-ի մեջ»:

Միանգամայն պարզ է, որ վերոհիշյալ տեղեկությունը տվող «Մուլորակը» ոչ թե Տ. Կամսարականն է, այլ հանդեսի տնօրեն Հրանտ Ասատուրը, որը

²⁰ Տե՛ս Հր. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 263—64:

²¹ Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1911, էջ 241:

²² «Մասիս»-ը 1892 թվականին լույս էր տեսնում երեք շաբաթ մի անգամ՝ № 3961-ը լույս էր տեսել ապրիլի 25-ին, իսկ № 3963-ը հունիսի 18-ին:

«Մասիս»-ի կողմից ընդունված տրադիցիան շխախտելու համար հետագայում ևս նույն ծածկանունով գրում է մի շարք այլ քրոնիկներ, որք համեմատում ենք «Մասիս»-ի առաջին վեց համարներում տպված Տ. Կամսարականի Մուրակ ծածկանվամբ ստորագրված քրոնիկների գաղափարական և լեզվա-ոճական առանձնահատկությունները նրա բացակայությամբ նույն ծածկանունով լույս տեսած Հր. Ասատուրի քրոնիկների հետ՝ տարբերությունը միանգամայն ակներև է դառնում²²։ Սկսած № 3971-ից Տ. Կամսարականը նորից ինքն է սկսում գրել «Մեր հորիզոնին վրա» բաժնի նյութերը։ Հանդեսի № 3972-ում լույս է տեսնում Պ. Դուրյանի բանաստեղծություններում Ս. Ֆելեկյանի կատարած «ուղղումների» մասին Մուրակ ծածկանունով ստորագրված քրոնիկը, որը հանդեսի տնօրեն Հր. Ասատուրի վկայությամբ պատկանում է Տ. Կամսարականին։ Հետագայում (սկսած № 3977-ից) հանդեսի «Մեր հորիզոնին վրա» բաժնի փոխարինվում է «Շարափվան լուրեր» բաժնով, առանց ստորագրության։

Այլ պարբերականներում հանդիպող (օրինակ՝ «Ծաղիկ» 1904 թ.) Մուրակ ծածկանվամբ ստորագրված ստեղծագործությունները Տ. Կամսարականի գրչին չեն պատկանում։

Նևտ ծածկանվամբ Տ. Կամսարականը մի քանի քրոնիկներ ունի 1898 թվականի «Մասիս»-ի էջերում։ Այլ պարբերականներում նևտ ծածկանունով ստորագրված ստեղծագործությունները Տ. Կամսարականի գրչին չեն պատկանում։

Անցուղ ծածկանվան մասին։ «Արևելք» օրաթերթը, որը 1896 թ. սկստեմբերի 14-ին արգելվել էր կառավարության կողմից, 1898 թվականի օգոստոսի 1-ից սկսվում է վերահրատարակվել, իսկ «Մասիս»-ը, որը 1898 թ. փետրվարի 2-ից մինչև հուլիսի 31-ը լույս էր տեսնում իրրև օրաթերթ, վերածվում է շաբաթաթերթի։ Այս օրաթերթին է, որ Տ. Կամսարականը Անցուղ ստորագրությամբ աշխատակցում է 1899 թվականին։ Թե ինքնակենսագրության մեջ, թե «Դիմաստվերներ»-ի առթիվ Հր. Ասատուրին ուղղված նամակում Տ. Կամսարականը անվերապահորեն հաստատում է այդ Ուղղելով Հր. Ասատուրի թույլ տված սխալը և հայտնելով, որ Անցուղ ստորագրությամբ իր ստեղծագործությունները լույս են տեսնել «Արևելք»-ի էջերում, Տ. Կամսարականը խնդրում է «Արդյոք կրնայի՞ր ինձի իմացնել ցանկով մը «Պղտիկ նոթեր» վերնագրով ու Անցուղ ստորագրված նոթերուս վերնագրերը»։

Տ. Կամսարականի այս և հետագա նամակներից երևում է, որ նա նպատակ է ունեցել մի քանի հատորով հրատարակել իր երկերի ժողովածուն։ Հենց այդ առթիվ է, որ նա Հր. Ասատուրից խնդրում է Անցուղ ստորագրությամբ լույս տեսած իր ստեղծագործությունների մի քանիսի ընդօրինակումները Տրվալ դնպքում մեղ հետաքրքրողն այն է, որ այդ նամակներում Տ. Կամսարականը հայտնում է Անցուղ ծածկանունով լույս տեսած իր ստեղծագործությունների մի քանիսի վերնագրերը՝ «Հյուսիս ու հարավ», «Ութերորդ մեղքը», «Գրականության դեր», «Դերասանուհին», «Մարգարիտներ», «Անծածկույթ եկեղեցին»։

²² Կամսարականի քրոնիկները գաղափարապես հագեցված գեղարվեստական փոքրիկ պատկերներ են. նրա բացակայությամբ այդ նույն ծածկանունով Հր. Ասատուրի գրած քրոնիկները լրագրային պարզ լուրեր են, որի պատճառով ինքր՝ Հր. Ասատուրն իսկ անհրաժեշտ չի համարել գրանք նշել իր մանրամասնորեն գրված ինքնակենսագրության մեջ։

²³ Դեկտ. 1904 թ. Աղաթյանի ֆոնդ. Տ. Կամսարականի 1901 թ. գեկտեմբերի 25-ի նամակը Հր. Ասատուրին։

«Երեք թեկնածու», «Քոթիյոն» և «Արևելք», «Նկարագիր», «Հայ ու արքայություն», և Հր. Ասատուրից ստանում զրանց ընդօրինակումները²⁴:

Տ. Կամսարականի Անցորդ ստորագրությամբ լույս տեսած ամենաուժեղ պորժերից մեկը՝ «Քու «Հայր մեր»-ը» ստեղծագործությունը («Արևելք», 1899, № 4030), որը հայ աշխատաված հոգևորականության քննադատությանը նվիրված ամենալավագույնն էր, արևմտահայ գրականության մեջ, հետագայում՝ Տ. Կամսարականի կենդանության ժամանակ, լույս է տեսնում նրա իսկական ստորագրությամբ «Մեր տարեցույցը»-ում (Կ. Պոլիս, 1910, էջ 19), Արամ Անտոնյանի «Գանձարան»-ում (բարձրագույն դասընթացք, Բ. տպագրություն, Կ. Պոլիս, 1920, էջ 259—261) ապա՝ «Էջեր հայ գրականությանն»-ում (Կահիրե, 1942, էջ 151—152): Վերոհիշյալ ու բազմաթիվ այլ տվյալներ անառարկելիորեն վկայում են, որ 1899 թ. «Արևելք» թերթի էջերում Անցորդ ծածկանվամբ ստորագրված ստեղծագործությունների շարքը, որի մեջ մտնում են նաև Հր. Ասատուրին ուղղված նամակներում հիշատակված ստեղծագործությունները, իրոք պատկանում են Տ. Կամսարականի գրչին²⁵: «Մասիս» շաբաթաթերթի 1900 թ. № 18-ում Անցորդ ծածկանվամբ լույս է տեսնում Տ. Կամսարականի՝ Գր. Զոհրապին ձոնված, «Գողցված հաճույք» նորավպր. Այդ նորավպր առթիվ 1909 թվականի մարտի 15-ին Վ. Մալեզյանին ուղղված նամակում Ս. Երեմյանը գրում է. «...Պիտի խնդրեմ իմ հին բարեկամ Պ. Տիգրան Կամսարականին իմանալ, թե արդյոք 1900-ի «Մասիս»-ին մեջ «Գողցված հաճույք»-ի Անցորդը ի՞նչն է²⁶: Մալեզյանի պատասխան նամակը մեզ անհայտ է, բայց Ս. Երեմյանը հետագայում իր «Գրագետ հայեր» գրքում Տ. Կամսարականի ստեղծագործությանը նվիրված հատվածում ակնարկելով «Գողցված հաճույք»-ի բովանդակությունը, գրում է. «Կամսարական ծանոթ էր Անցորդ և Փյունիկ ծածկանուններով, Ֆյորանսի մեջ իր նկարագրություններով Գեղարվեստական իտրոմելը ուղած է ծծել: Ու իր այցելած վայրերու հրաշակերտներեն հափրացած իտալ ծերակուտականի մր տիկինին սերը կուզե հափշտակելը²⁷:

²⁴ Տե՛ս ճշոր լուրս, 1941, № 5790 և ԳԱԹ-ի Թ. Ազատյանի ֆոնդում պահվող Հր. Ասատուրին ուղղված Տ. Կամսարականի 1922 թ. մարտի 3-ի, մարտի 12-ի, ապրիլի 9-ի և հունիսի 14-ի նամակները:

Տ. Կամսարականի Անցորդ ծածկանվամբ ստորագրված ստեղծագործությունների շարքը սկսում է լույս տեսնել «Արևելք» թերթի 1899 թվականի № 4011-ից և շարունակվում է մինչև № 4037-ը: Հայկ. ՍՍԻԿ գրապահոցներում այդ տարվա «Արևելք»-ի հավաքածոներում պակասում են №№ 4020, 4034, 4036 թերթերը, որոնց թե՛ նախորդ, թե՛ հետորդ համարներում Անցորդը (Տ. Կամսարական) գործեր ունի:

²⁵ Վ. Մալեզյան, Ռամբուս վրա, Փարիզ, 1950, էջ 273:

²⁶ Ս. Երեմյան, Գրագետ հայեր, 8-րդ շարք, Վենետիկ, 1914, էջ 335:— Տ. Կամսարականի պատմվածքի գործողությունը ծավալվում է Բուսալիայի Ֆյորանս նահանգում, պատմվածքի հերոսների շարքում կա իտալացի մի սենատոր (ծերակուտական) և նրա կինը՝ Բուսալի վառվառյանը: Տ. Կամսարականը այդ պատմվածքը գրում է 1900 թվականին, Բուսալիա այցելելուց հետո:

Այդ այցելության ժամանակ է, որ Ս. Երեմյանը ծանոթանում է Տ. Կամսարականի հետ: Այդ առթիվ Ս. Երեմյանը գրում է. «Գրողին հետ (Տ. Կամսարականի) բարեկամական հուշ մը ունիմ. անցողակի Անցորդ մըն էր, որ իր բարեկամությունը շատ սիրելի բրավո: Նույն տեղում, էջ 361: Այդ տեսակետից հետաքրքիր են Ս. Երեմյանի նաև հեանյալ տողերը. «Կամսարական մեր մամուլին մեջ ունեցել է նաև որ «Ինչ գրչի գործ մը: Պիտի չի մոռացվի իր «Գողցված հաճույք», որը 1899-ին «Արևելք»-ի մեջ կհրատարակեր: Համոզու, սրամիտ ակնարկներով՝ գրականության գրքերեն գուրս չեն մնար այդ էջերն: Նույն տեղում, էջ 391:

Տ. Կամսարականը Անցորդ ծածկանունով հանդես է հիկել նաև 1915 թվականից Ալեքսանդրիայում լույս տեսնող «Արև» թերթի էջերում: Դա հավաստվում է թե վերևում հիշատակված Ա. Չոպանյանին ուղղված Տ. Կամսարականի նամակով և թե Անցորդ ծածկանունով այդ թերթում 1915 թվականին լույս տեսած հոդվածներից մեկին կցված խմբագրության ծանոթագրությունով:

1900 և 1901 թվականների, ինչպես նաև հետագա տարիներին «Արևելք»-ի էջերում հանդիպող Անցորդ ստորագրությամբ հոդվածները Տ. Կամսարականի գրչին չեն պատկանում: Անցորդ ստորագրությամբ բազմաթիվ հոդվածների կարելի է հանդիպել նաև այլ պարբերականներում («Արևելյան Մամուլ» (1897), «Նոր-Դար» (1889) և այլն), որոնք սակայն, ոչ մի ուղեշրջան չունեն Տ. Կամսարականի անվան ու ստեղծագործության հետ:

Նախքան մյուս ծածկանուններին անցնելը, եթե ոչ Անցորդի, ապա Կամսարականի Ասեղ ու Նետ ծածկանունների մասին ավելորդ չի լինի վկայակոչել մի ուրիշ ժամանակակցի՝ Օննիկ Զիֆթե-Սարաֆի նուրբ ակնարկը այդ մասին: Իր «Սիրված դեմքեր» շարքում խոսելով Տ. Կամսարականի մասին ու բարձր գնահատելով նրա ստեղծագործությունը, Զիֆթե-Սարաֆը գրում է. «Իր (Տ. Կամսարականի) ոճն ալ, հարկ է ըսել, էն նրբացածն է մեզի ծանոթ բոլոր ոճերուն մեջ. նուրբ ասեղի մր պես, արագ նետի մր պես. և լուսածիր՝ անցորդ ասուպի մր պես: ... Ատենով իր cistle բրած փողփողուն ասեղները էն փնտրված, էն թանկարժեք դոհարազարդերն էին զորս ամուսնու ուզեին անցունել իրենց միտքերուն վրա, որպես անցորդին անցողակի նետած կարճ խոսքերը»²⁸: Կարիք կա՝ արդյոք նշելու, թե Զիֆթե-Սարաֆը Կամսարականի ստեղծագործության ոճի իր այս բնորոշումներով պարզ կերպով ակնարկում է նրա Ասեղ, Նետ ու Անցորդ ծածկանուններով լույս տեսած ստեղծագործությունները:

Փյունիկ ծածկանվան մասին: Տ. Կամսարականը այս ծածկանվան մասին խոսում է իր ինքնակենսագրության մեջ, որտեղ, ինչպես վերևում ցույց տրվեց, փակագծերի մեջ նշվում է, թե այդ ծածկանունով գրել է «Մարտ»-ում:

Հայկ. ՍՍՌ ԳԱ Գրականության ու արվեստի թանգարանի Ա. Չոպանյանի ֆոնդում գտնվող այս ամսաթերթի բոլոր նյութերը անստորագիր են: Մեզ թվում է, թե Կամսարականը «Մարտ»-ը շփոթում է «Նոր կյանք»-ի հետ, որը նույնպես լոնդոնում էր հրատարակվում: Ի հակակշիռ «Մարտ»-ին, որը զբաղվում էր զուտ կուսակցական հարցերով («Մարտ»-ը հնչակյանների օրդանն էր) «Նոր կյանք»-ը ուներ ընդգծված գրական բնույթ: Այստեղ է, որ առաջին անգամ լույս տեսան Նր. Ռոյանի «Հեղափոխության մակարույծները», Լ. Բաշլյանի, Արփիարյանի, Միքայել Կյուրճյանի և ուրիշների մի շարք արժեքավոր գեղարվեստական ստեղծագործությունները: Տ. Կամսարականը աշխատակցել է ոչ թե «Մարտ»-ին, այլ «Նոր կյանք»-ին:

«Նոր կյանք»-ի 1899 թվականի N 5-ում Փյունիկ ծածկանվամբ լույս է տեսնում Տ. Կամսարականի «Հայրենիքին պսակը» հոդվածը (էջ 67—69): Այդ հոդվածը նույն վերնագրով, առանց փոփոխության, այս անգամ արդեն Տ. Կամսարականի իսկական ստորագրությամբ լույս է տեսնում 1914 թվականի «Ողիպատահայ տարեցույց»-ում (էջ 191—196): Վերահիշյալ փաստը անառարկելիորեն ցույց է տալիս, թե Փյունիկը իրոք Տ. Կամսարականի ծածկանուններից

²⁸ Օննիկ Զիֆթե-Սարաֆ, Սիրված դեմքեր—Տիգրան Կամսարական, «Մարտ», 1901, N 48, էջ 733: (Cisèle = բանդակած, Initie = իրավագետներ):

մեկն է, որ նա այդ ծածկանվամբ գրել է ոչ թե «Մարտ» այլ «Նոր կյանք» հանդեսում:

ZZZ ծածկանվան մասին: Ըր ինքնակենսագրության մեջ Կամսարականը նշում է, որ այս ծածկանունով ինքր տշխատակցել է արտասահմանյան՝ այսինքն Թուրքիայի սահմաններից դուրս հրատարակվող թերթերին:

1903 թվականի ապրիլի 18-ից եր. Օտյանի խմբագրությամբ Ալեքսանդրիայում սկսում է լույս տեսնել «Ազատ բեմ» շաբաթաթերթը: Կամսարականը, որն այն ժամանակ Ալեքսանդրիայում էր ապրում, ոչ միայն ակտիվ կերպով աշխատակցում, այլ նաև նյութապես ապահովում է թերթի անխափան հրատարակումը²⁹: Շաբաթաթերթի հենց առաջին համարում ZZZ ծածկանվամբ լույս է տեսնում Տ. Կամսարականի «Լրագրության խաչագողները» հոդվածը:

Հայկակ ծածկանվան մասին: Տ. Կամսարականը իր ինքնակենսագրության մեջ հայտնում է, որ ի թիվս այլ ծածկանունների, ինքր արտասահմանյան թերթերում ստորագրել է նաև Հայկակ ծածկանունով, նույն տեղում նա ավելացնում է, թե այդ ծածկանունով վերջերս երեք հոդված է ուղարկել Կ. Պոլիս «Բյուզանդիոն» թերթին (ինքնակենսագրությունը դրված է 1909 թվականի հունիսի 4-ին):

Տ. Կամսարականի Հայկակ ծածկանունով ստորագրված գործերը ճշտելիս անհրաժեշտ էր նկատի ունենալ, որ Հայկակը եղել է Ա. Արփիարյանի ամենատարածված ծածկանուններից մեկը³⁰: Բացի Արփիարյանից Հայկակ ծածկանունը օգտագործել է նաև մի այլ արևմտահայ հեղինակ (տես Մ. Պոտուրյան, «Հայ հանրագիտակ», էջ 607):

Տ. Կամսարականի վերոհիշյալ անվերապահ հայտարարությունը, հոդվածներից մեկում պարունակող ինքնակենսագրական տվյալները, ինչպես նաև հոդվածներից մեկին կցված խմբագրության ծանոթագրությունը և բազմաթիվ այլ տվյալներ միանգամայն ապացուցում են, որ Արփիարյանի սպանությունից հետո (1908 թ. փետրվարի 12) «Բյուզանդիոն»-ի էջերում Հայկակ ծածկանունով լույս տեսած երեք հոդվածները («Բաց թուղթ առ «Ծրկաթն պատրիարք» 1908, 9 սեպտ., № 3624, «Աղատություն գինարբուք» — 1908, № 3647, «Պատմական դավաթը», — 1909, 10 հունվ., № 3737) իրոք Տ. Կամսարականի գրչին են պատկանում:

Նևստոր, Հ. Բ. Տեր-Ջաֆարյան ծածկանունների մասին:

Այս ծածկանուններով Տ. Կամսարականը հոդվածներ և ստորագրել Ալեքսանդրիայում լույս տեսնող «Արև» թերթում: 1915 թ. սեպտեմբերի 4-ին Ա. Չոպանյանին ուղղված նամակում Տ. Կամսարականը, ինչպես վերևում ասվեց,

²⁹ Տե՛ս Ե. Օտյանի «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշերի «Երկրորդ մեջ» համաժամար (Եժամանակ, 1912, № 1268):

³⁰ Ա. Արփիարյանը Հայկակ ծածկանունով ստորագրել է Թիֆլիսի «Մշակ» թերթի իր թղթակցությունները (տես «Նոր կյանք», 1899, № 14, էջ 213), իսկ այլ պարբերականներում, բացի իր իսկական ստորագրությունից և անվան ու ազգանվան սկզբնատուներից՝ Ա. Ա., օգտագործել է Հրազդան, Սիկլիսիկ, Հրազդան, * * * ծածկանունները:

Կահրեի «Լուսարբ» թերթի (որի խմբագիրը այն ժամանակ Ա. Արփիարյանն էր) 1906 թվականի № 236-ում Հայկակ ծածկանունով լույս տեսած «Դործ մը՝ կոթող մը» հոդվածը պատկանում է ոչ թե Արփիարյանի, այլ Տ. Կամսարականի գրչին: Փարիզի Նուպարյան Մատենադարանից մեր կողմից ստացված Տ. Կամսարականի նյութերի մեջ գտնվեց նաև վերոհիշյալ հոդվածի Տ. Կամսարականի ձեռագիրը՝ Հայկակ ստորագրությամբ:

գրում է, թե ինքը «Արև»-ին աշխատակցել է «...քիչ մը Անգլոդ և այլ ծածկանուններով»:

Անցորդ ծածկանունով Կամսարականը «Արև»-ին աշխատակցել է 1915 թվականի ընթացքում: Այդ թերթում Անցորդ ծածկանունով Տ. Կամսարականի լույս տեսած առաջին հոդվածի առթիվ թերթի խմբագրությունը իր ծանոթագրության մեջ գրում է. «Ստորև հաճույքը ունենր մեր ընթերցողներուն ներկայացնելու շքեղ մեկ արձակը հայ գրականության մեջ վարպետի մը, որ կծածկվի,—հազիվ թե—Անցորդ կեղծանունին տակ և որ իր բուն անվամբ արդեն կերևեր մեր աշխատակիցներու ցանկին գլուխը»³¹:

Հետագայում ևս Տ. Կամսարականը նույն ծածկանունով շարունակել է աշխատակցել թերթին, բայց ոչ որի համար արդեն գաղտնիք չի եղել, որ Անցորդը Տ. Կամսարականն է: Այնինչ Կամսարականը երբեմն բավականին սուր քննադատության էր ենթարկում ազգայնական կուսակցությունների գործունեությունը: Այդ իսկ պատճառով 1916 թվականին նա իր հոդվածները ստորագրում է ոչ թե բոլորին ծանոթ Անցորդ, այլ Նեստուր ծածկանվամբ:

1916 թվականի «Արև» թերթի էջերում Նեստուր ծածկանունով ստորագրված հոդվածները թե՛ իրենց թեմատիկայով, թե՛ իրենց գաղափարական բովանդակությամբ ու լեզվա-ոճական առանձնահատկություններով վկայում են, որ դրանք իրոք պատկանում են Տ. Կամսարականի գրչին. ուստի, ոչ մի կասկած չկա, թե ճիշտ է «Սիոն»-ի հոդվածագրի նաև մյուս երկու՝ Շ և Բ. Տեր-Ջաֆարյան ծածկանունների մասին տված տեղեկությունը, բայց ձեռքի տակ «Արև» թերթի 1917, 1918, 1919 թվականների լրիվ հավաքածոները չունենալու պատճառով մեզ չհաջողվեց Տ. Կամսարականի այս երկու ծածկանուններով ստորագրված որևէ հոդված գտնել:

* * *

Տ. Կամսարականի ծածկանուններով ստորագրված գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա ծածկանունների օգնության է դիմել ոչ թե բմահաճույքից դրդված, այլ կյանքի թելադրանքով: Այդ ստեղծագործությունները թե՛ իրենց գաղափարական նպատակասլացությամբ, թե՛ վառ ու անկեղծ ժողովրդասիրությամբ ու էմոցիոնալ հազեցվածությամբ, մի անգամ ևս վկայում են, որ անվանի գրողը անկեղծորեն սիրել է հասարակ մարդկանց, բարձր է գնահատել նրանց բարոյական արժանիքները, որ նա ամենաուժեղ ուսակցիայի պայմաններում իսկ չի վարանել մերկացնելու տիրողների անմարդկային վերաբերմունքը: Ծածկանուններով ստորագրված Տ. Կամսարականի ավելի քան 70 գործերից մեծամասնությունը բրոնխիտներ ու գեղարվեստական փոքրիկ պատկերներ են. որոնցում առկա է տաղանդավոր հեղինակի իրականության ամենակենսական խնդիրների ընտրության ու ընդհանրացման մեծ կարողությունը: Սակայն փոքր կտավի այդ ստեղծագործություններում իսկ Կամսարականը կարողացել է ոչ միայն բացահայտել, այլև անողորմ դատավճիռ կարդալ ու գեղարվեստական վարակիչ կրքոտությամբ ժխտել ժողովրդի մարդկանց կյանքը այլանշակող հասարակական արատները: Ոչ պակաս կարևոր են նաև արվեստի ու գրականության հարցերին նվիրված նրա բազմաթիվ հոդվածները ու գրախոսականները, որոնք ունեն արդիական մեծ նշանակություն:

³¹ «Արև», 1913, № 11:

Այդ ստեղծագործությունների ուսումնասիրման հետևանքով Տ. Կամսարականի գրական ժառանգության մասին մեր պատկերացումների զգալի խորացումը ու ամրողացումը մի անգամ ևս վկայում է, որ նախասովետական շրջանի մեր գրողների ու հրապարակախոսների օգտագործած ծածկանունների հայտնաբերման ու հաստատման գործը մեր բանասիրության կողմից իր լուծումը պահանջող կարևոր ու լուրջ խնդիր է: